«ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎԱՐԿ #5387 և # 8342

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորական հաշվետվություն	3
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն	8
Հատկացված միջոցների օգտագործումն ըստ Ծրագրի գործունեության տեսակների	10
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	12
Հատուկ հաշիվների մասին հաշվետվություն	13
Ծախսերի մասին հաշվետվություն	15
Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	17

PHP
PHP Partners

Փի-Էյչ-Փի Փարթնըրզ ՓԲԸ
PHP Partners CJSC

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան,Ալեք Մանուկյան 15ա
Registration address: 15a Alek Manukyan, Yerevan
Գործունեության հասցե՝ ՀՀ, Երևան,Ադոնցի 2, Երազ բիզնես կենտրոն
Activity address: 2 Adonts str., Yeraz Business Centre, Yerevan, Armenia

Հեռ. (+374)10204090
Tel.
Էլ-փոստ general@php.am
E-mail

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատարին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ ՊՀ-ի (այսուհետ՝ ԿԾԿ) կողմից իրականացվող Կրթության բարելավում ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը՝ 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար, Միջոցների օգտագործման մասին հաշվետվությունը ըստ գործունեության տեսակների, Ծախսերի մասին հաշվետվությունը, Հատուկ հաշվի հաշվետվությունը, ինչպես նաև Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն առ 31 դեկտեմբերի 2019թ., հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության համառոտ նկարագրությունը և այլ բացատրական նյութեր:

Մեր կարծիքով կից հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն, ինչպես ներկայացված է Ծանոթագրություն 2(ա)-ում:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտների համաձայն մեր պատասխանատվությունը ներկայացվում է ստորև՝ մեր Հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում: Մենք հանդիսանում ենք ԿԾԿ-ից անկախ աուդիտորներ՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այդ կանոնագրքի: Մենք կարծում ենք, որ մեր կողմից հավաքագրված աուդիտորական ապացույցները բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքները լուսաբանող պարագրաֆ.օգտագործման և բաշխման սահմանափակում

Մենք ուշադրություն ենք հրավիրում հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ծանոթագրություն 2(ա)-ի վրա, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են ՀՀ կառավարությանը, Զարգացման միջազգային ընկերակցությանը, ինչպես նաև Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին տեղեկատվություն տրամադրելու նպատակով՝ օժանդակելու նրանց գնահատել Կրթության բարելավում ծրագրի իրականացումը: Արդյունքում, հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող տեղին լինել մեկ այլ նպատակի համար: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հարցի առումով.

Առանցքային աուդիտորական հարցեր

Առանցքային աուդիտորական հարցերն այն հարցերն են, որոնք, ըստ մեր մասնագիտական դատողության, ընթացիկ ժամանակաշրջանի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար ամենանշանակալին էին: Այդ հարցերը քննարկվել են հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների՝ որպես ամբողջություն, մեր կողմից իրականացրած աուդիտի համատեքստում, և դրանց վերաբերյալ կարծիք արտահայտելիս՝ այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք ներկայացնում:

ԿԾԿ-ն *Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում* ծրագրի ենթաբաղադրիչ 1.1-ի շրջանակներում նախադպրոցական հաստատություններին 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տրամադրել է 216,149 ԱՄՆ դոլարի դրամաշնորհներ: Դրամաշնորհների տրամադրումը և հետագա ծախսումը պետք է իրականացվի *Նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացման դրամաշնորհների Ղեկավար ձեռնարկի* համաձայն, որը սահմանում է նախադպրոցական հաստատությունների իրավասության և ընտրության չափանիշները, դրամաշնորհառուների հետագա պարտականությունները, ինչպես նաև հաշվետվողականության և վերահսկման ընթացակարգերը:

Ի թիվս այլնի՝ այս ոլորտում մեր կողմից իրականացրած աուդիտի ընթացակարգերը ներառել են՝

- ղեկավարության հետ հաստատել դրամաշնորհի տրամադրման գործընթացը և Ղեկավար ձեռնարկի հետ դրա համապատասխանությունը,
- ընտրանքային հիմունքով՝ վերլուծել դրամաշնորհին վերաբերող պայմանները և քննարկել դրամաշնորհառուի կողմից այդ պայմաններին համապատասխանությունը,
- ընտրանքային հիմունքով դրամաշնորհառուի կողմից տրամադրած հաշվետվությունները համեմատել ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ,
- ընտրանքային հիմունքով ստուգել տրամադրված դրամաշնորհներից իրականացված գնումների համապատասխանությունը Համաշխարհային Բանկի գնումների ուղեցույցներին:

Մեր կողմից իրականացրած աուդիտի ընթացակարգերի արդյունքում, մենք եզրակացրել ենք, որ դրամաշնորհների տրամադրումը համապատասխանում է Ղեկավար ձեռնարկում սահմանված իրավասության չափանիշներին, ընթացակարգերին և պահանջներին:

ԿԾԿ-ն *Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը* (այսուհետ ՆՄՀ) ծրագրի բաղադրիչ 2-ի շրջանակներում բարձրագույն ուսումնական հաստատություններին (այսուհետ՝ ԲՈՒՀ) 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տրամադրել է 132,950 ԱՄՆ դոլարի դրամաշնորհներ: Դրամաշնորհների տրամադրումը և հետագա ծախսումը պետք է իրականացվի *Կրթության բարելավում ծրագրի շրջանակներում Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացման Ղեկավար ձեռնարկի* համաձայն, որը սահմանում է ԲՈՒՀ-երի իրավասության և ընտրության չափանիշները, ԲՈՒՀ-երի հետագա պարտականությունները, ինչպես նաև հաշվետվողականության և վերահսկման ընթացակարգերը:

Ի թիվս այլնի՝ այս ոլորտում մեր կողմից իրականացրած աուդիտի ընթացակարգերը ներառել են՝

- ԲՈՒՀ-ի կողմից տրամադրած հաշվետվությունները համեմատել ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ,
- ստուգել տրամադրված դրամաշնորհների շրջանակում իրականացված գնումների համապատասխանությունը Համաշխարհային Բանկի գնումների ուղեցույցներին:

Մեր կողմից իրականացրած աուդիտի ընթացակարգերի արդյունքում, մենք եզրակացրել ենք, որ դրամաշնորհների տրամադրումը համապատասխանում է Ղեկավար ձեռնարկում սահմանված իրավասության չափանիշներին, ընթացակարգերին և պահանջներին:

Կրթության բարելավում ծրագրի նպատակներն իրականացնելիս՝ ԿԾԿ-ն կատարել է 2,356,221 ԱՄՆ դոլարի գնումներ խորհրդատվական ծառայություններ և աշխատանքներ ձեռք բերելու համար: Գնումները պետք է իրականացվեն գնումների համար սահմանված Համաշխարհային Բանկի կիրառելի ուղեցույցների համաձայն:

Ի թիվս այլնի՝ այս ոլորտում մեր կողմից իրականացրած աուդիտի ընթացակարգերը ներառել են՝

- ղեկավարության հետ դիտարկել գնման գործընթացը և Համաշխարհային Բանկի գնումների կիրառելի ուղեցույցի հետ համապատասխանությունը,
- վերլուծել գնումների պլանը, յուրաքանչյուր գնման պայմանները, Համաշխարհային Բանկի հետ ունեցած նամակագրությունը, գնումների մեթոդը և դիտարկել այս պայմանների համապատասխանությունը Համաշխարհային Բանկի գնումների կիրառելի ուղեցույցի հետ,
- ընտրանքային հիմունքով, ստուգել գնումների փաթեթների համապատասխանությունը Համաշխարհային Բանկի գնումների կիրառելի ուղեցույցի հետ,
- ընտրանքային հիմունքով ստուգել գնումները հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գնումների պայմանագրերով ներկայացման ենթակա հաշվետվությունների առկայությունը:

Մեր կողմից իրականացված աուդիտի ընթացակարգերի արդյունքում, մենք եզրակացրել ենք, որ գնումներն իրականացվել են Համաշխարհային Բանկի կողմից սահմանված գնումների կիրառելի ուղեցույցների համաձայն:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 2(ա)-ում, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի ներդրման համար, որը ղեկավարության կարծիքով անհրաժեշտ է հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության, թե սխալի հետևանքով:

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ծրագրի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի ԿԾԿ-ն լուծարելու կամ Ծրագրի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Հովհաննես Պետրոսյան
Տնօրեն

«Փի-Էյչ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ
15 հունիսի 2020

Լիլիթ Մինասյան
Աուդիտորական
ծառայությունների ղեկավար

ԱՄՆ դոլար	Փաստացի 2019	Նախատես-ված 2019	Տարբերու-թյուն 2019	Փաստացի Կուտակային	Նախատես-ված Կուտակային	Տարբերու-թյուն Կուտակային	Ծրագրի գնահատման փաստաթուղթ Ծրագրի տևողությունը
Շրջանառու կապիտալի սկզբնական մնացորդ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,770,776						
Կանխավճարներ	93,332						
Կրեդիտորական պարտքեր	(148,235)						
Ընդամենը	**1,715,873**						
Ֆինանսավորման աղբյուրներ							
ՀՄԸ-ի կողմից ֆինանսավորում	1,915,974			8,664,243			
ՎՀՄԲ-ի կողմից ֆինանսավորում	1,915,974			8,701,744			
ՀՀ կառավարության համաֆինանսավորում	926,240			3,855,671			
Եկամուտ տույժերից	325			14,721			
Դոնորների կողմից հատկացված ընդհանուր ֆինանսավորում	**4,758,513**			**21,236,379**			
Արտարժույթի փոխանակման փոխարժեքի տարբերություն	**2,510**			**(192)**			
Միջոցների օգտագործում							
Աշխատանքների ձեռքբերում	1,820,532	3,747,786	(1,927,254)	9,022,257	10,949,511	(1,927,254)	
Ապրանքների ձեռքբերում	331,038	2,563,626	(2,232,588)	748,595	2,981,183	(2,232,588)	
Խորհրդատվական ծառայություններ	204,651	300,920	(96,269)	1,537,366	1,633,635	(96,269)	

ԱՄՆ դոլար	Փաստացի 2019	Նախատես-ված 2019	Տարբերու-թյուն 2019	Փաստացի Կուտակային	Նախատես-ված Կուտակային	Տարբերու-թյուն Կուտակային	Ծրագրի գնահատման փաստաթուղթ Ծրագրի տևողությունը
Վերապատրաստումներ	28,665	44,532	(15,867)	81,001	96,868	(15,867)	
Դրամաշնորհներ	349,099	790,830	(441,731)	4,792,586	5,234,317	(441,731)	
Այլ գործառնական ծախսեր	333,402	322,349	11,053	1,607,373	1,596,320	11,053	
Ընդհանուր	**3,067,387**	**7,770,043**	**(4,702,656)**	**17,789,178**	**22,491,834**	**(4,702,656)**	**37,462,500**
Միանվագ վճարվող սպասարկման գումար	**-**	**-**	**-**	**37,500**	**37,500**	**-**	**37,500**
	3,067,387	**7,770,043**	**(4,702,656)**	**17,826,678**	**22,529,334**	**(4,702,656)**	**37,500,000**
Շրջանառու կապիտալի վերջնական մնացորդ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,896,954						
Կանխավճար	1,632,489						
Կրեդիտորական պարտքեր	(119,934)						
Ընդամենը	**3,409,509**						

Ծրագրի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են «Կրթական ծրագրերի կենտրոն» ՊՀ-ի ղեկավարության կողմից և ստորագրվել են ղեկավարության անունից 2019 թվականի հունիսի 15-ին:

Գրիշա Հովհաննիսյան
Տնօրենի պաշտոնակատար

Վրմինե Խաչատրյան
Ֆինանսական գծով ղեկավար

ԱՄՆ դոլար	Փաստացի 2019	Նախատես-ված 2019	Տարբերու-թյուն 2019	Փաստացի Կուտակային	Նախատես-ված Կուտակային	Տարբերու-թյուն Կուտակա-յին	Ծրագրի գնահատման փաստաթուղթ Ծրագրի տևողությունը
Ծրագրի գործունեության տեսակները							
Բաղադրիչ 1. Հանրակրթության որակի բարելավում							
Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում	260,755	244,449	16,306	1,534,265	1,517,959	16,306	1,875,000
Ենթաբաղադրի 1.2. Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին	1,644,470	5,823,763	(4,179,293)	9,183,558	13,362,851	(4,179,293)	22,500,000
Ենթաբաղադրիչ 1.3. Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում	633,898	605,742	28,156	1,665,859	1,637,703	28,156	2,500,000
Ենթաբաղադրիչ 1.4. Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով	51,082	130,600	(79,518)	202,767	282,285	(79,518)	625,000
	2,590,205	**6,804,554**	**(4,214,349)**	**12,586,449**	**16,800,798**	**(4,214,349)**	**27,500,000**
Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը	149,026	619,135	(470,109)	3,514,070	3,984,179	(470,109)	6,250,000

ԱՄՆ դոլար	Փաստացի 2019	Նախատես-ված 2019	Տարբերու-թյուն 2019	Փաստացի Կուտակային	Նախատես-ված Կուտակային	Տարբերու-թյուն Կուտակա-յին	Ծրագրի գնահատման փաստաթուղթ Ծրագրի տևողությունը
Բաղադրիչ 3. Ծրագրի կառավարում, մշտադիտարկում և իրականացում	328,156	346,354	(18,198)	1,688,659	1,706,857	(18,198)	3,712,500
	477,182	**965,489**	**(488,307)**	**5,202,729**	**5,691,036**	**(488,307)**	**37,462,500**
Միանվագ վճարվող սպասարկման վճար	-	-	-	37,500	37,500	-	37,500
Ծրագրի ընդհանուր ծախս	**3,067,387**	**7,770,043**	**(4,702,656)**	**17,826,678**	**22,529,334**	**(4,702,656)**	**37,500,000**

ԱՄՆ դոլար	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		
ԶՄԸ հատուկ հաշիվ	948,477	885,388
ՎԶՄԲ հատուկ հաշիվ	948,477	885,388
Կառավարության համաֆինանսավորման հաշիվ	-	-
	1,896,954	**1,770,776**
Ծրագրի կուտակային ծախսեր		
ԶՄԸ-ի կողմից ֆինանսավորվող միջոցների կուտակային ծախսեր	7,115,671	5,888,717
ՎԶՄԲ-ի կողմից ֆինանսավորվող կուտակային ծախսեր	7,115,671	5,888,717
Կառավարության կողմից ֆինանսավորվող կուտակային ծախսեր	3,557,836	2,944,357
	17,789,178	**14,721,791**
Կանխավճարներ	1,632,489	93,332
Միանվագ վճարվող սպասարկման վճար	37,500	37,500
Ընդհանուր ակտիվներ	**21,356,121**	**16,623,399**
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ		
Ծրագրի ֆինանսավորում		
ԶՄԸ-ի կողմից ֆինանսավորում	8,664,243	6,748,269
ՎԶՄԲ-ի կողմից ֆինանսավորում	8,701,744	6,785,770
Կառավարության կողմից համաֆինանսավորում	3,855,671	2,929,431
Տույժեր պայմանագրերից	14,721	14,396
Ընդհանուր միջոցներ	**21,236,379**	**16,477,866**
Կրեդիտորական պարտքեր	119,934	148,235
Արտարժույթի փոխարժեքի փոխանակման տարբերություններ	(192)	(2,702)
Ընդհանուր պարտավորություններ	**21,356,121**	**16,623,399**

ԱՄՆ դոլար	2019	2018
Սկզբնական մնացորդ	885,388	692,098
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ՀՄԸ-ից ստացված կանխավճար/համալրում	1,915,974	1,631,031
Ներկա չօգտագործված հատուկ հաշվին փոխանցված կանխավճար	**2,801,362**	**2,323,129**
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված վերջնական մնացորդ	948,477	885,388
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վճարված թույլատրելի ծախսերի գումար	1,852,885	1,437,741
Ընդհանուր հաշվարկված կանխավճար	**2,801,362**	**2,323,129**

ԱՄՆ դոլար	2019	2018
Սկզբնական մնացորդ	885,388	692,098
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ՎԶՄԲ-ից ստացված կանխավճար/համալրում	1,915,974	1,631,031
Ներկա չօգտագործված հատուկ հաշվին փոխանցված կանխավճար	**2,801,362**	**2,323,129**
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված վերջնական մնացորդ	948,477	885,388
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վճարված թույլատրելի ծախսերի գումար	1,852,885	1,437,741
Ընդհանուր հաշվարկված կանխավճար	**2,801,362**	**2,323,129**

2019	Աշխատանքներ	Ապրանքներ	Խորհրդատվական ծառայություններ	Վերապատրաստումներ	Դրամաշնորհներ	Գործառնական ծախսեր	Ընդամենը
CDA-C24	111,391	-	17,976	446	2,262	35,938	168,013
CDA-C25	20,114	-	6,327	450	52,141	27,997	107,029
CDA-C26	457,855	10,944	11,146	6,040	83,777	29,573	599,335
CDA-C27	116,577	82,577	14,274	2,570	3,234	17,554	236,786
CDA-C28	248,432	13,595	4,498	905	32,900	8,852	309,182
CDA-C29	289,707	-	24,378	1,506	100,987	23,852	440,430
	1,244,076	**107,116**	**78,599**	**11,917**	**275,301**	**143,766**	**1,860,775**[1]

2018	Աշխատանքներ	Ապրանքներ	Խորհրդատվական ծառայություններ	Վերապատրաստումներ	Դրամաշնորհներ	Գործառնական ծախսեր	Ընդամենը
CDA-C19	193,948	-	4,869	(86)	28,814	20,717	248,262
CDA-C20	239,637	-	8,771	-	146,445	38,493	433,346
CDA-C21	247,359	-	16,630	339	75,530	28,893	368,751
CDA-C22	177,389	-	3,859	-	79,047	17,595	277,890
CDA-C23	152,426	-	6,560	7,193	46,640	18,687	231,506
	1,010,759	**-**	**40,689**	**7,446**	**376,476**	**124,385**	**1,559,755**[2]

[1] Ի լրումն Ծախսերի մասին հաշվետվության,արձանագրությունների պատճենները ներկայացված են 55,199 ԱՄՆ դոլար ընհանուր գումարով:

[2] Ի լրումն Ծախսերի մասին հաշվետվության,արձանագրությունների պատճենները ներկայացված են 71,276 ԱՄՆ դոլար ընհանուր գումարով:

2019	Աշխատանք-ներ	Ապրանքներ	Խորհրդատվական ծառայություններ	Վերապատրաստումներ	Դրամաշնորհներ	Գործառնական ծախսեր	Ընդամենը
LDA-C24	111,391	-	17,976	446	2,262	35,938	168,013
LDA-C25	20,114	-	6,327	450	52,141	27,997	107,029
LDA-C26	457,855	10,944	11,146	6,040	83,777	29,573	599,335
LDA-C27	116,577	82,577	14,274	2,570	3,234	17,554	236,786
LDA-C28	248,432	13,595	4,498	905	32,900	8,852	309,182
LDA-C29	289,707	-	24,378	1,506	100,987	23,852	440,430
	1,244,076	**107,116**	**78,599**	**11,917**	**275,301**	**143,766**	**1,860,775**[3]

2018	Աշխատանք-ներ	Ապրանքներ	Խորհրդատվական ծառայություններ	Վերապատրաստումներ	Դրամաշնորհներ	Գործառնական ծախսեր	Ընդամենը
LDA-B19	193,948	-	4,869	(86)	28,814	20,717	248,262
LDA-B20	239,637	-	8,771	-	146,445	38,493	433,346
LDA-B21	247,359	-	16,630	339	75,530	28,893	368,751
LDA-B22	177,389	-	3,859	-	79,047	17,595	277,890
LDA-B23	152,426	-	6,560	7,193	46,640	18,687	231,506
	1,010,759	**-**	**40,689**	**7,446**	**376,476**	**124,385**	**1,559,755**[4]

[3] Ի լրումն Ծախսերի մասին հաշվետվության,արձանագրությունների պատճենները ներկայացված են 55,199 ԱՄՆ դոլար ընհանուր գումարով:
[4] Ի լրումն Ծախսերի մասին հաշվետվության,արձանագրությունների պատճենները ներկայացված են 71,276 ԱՄՆ դոլար ընհանուր գումարով:

1 Նախապատմություն

(ա) Կազմակերպությունը և կազմակերպության կողմից իրականացվող գործունեությունը

«Կրթական ծրագրերի կենտրոն» ՊՀ-ն հիմնադրվել է 2000 թվականին ՀՀ Կրթության և գիտության նախարարության կառուցվածքում: «Կրթական ծրագրերի կենտրոն» ՊՀ-ի հիմնական գործունեությունը կրթության համակարգում ծրագրերի իրականացումն է:

ՀՀ Կառավարությունը Համաշխարհային Բանկի (ՀԲ) հետ կնքել է Ֆինանսավորման և Վարկային համաձայնագրեր (ՋՄԸ Վարկ #5387 և ՎՋՄԲ Վարկ #8342)՝ Կրթության բարելավում ծրագրին (այսուհետ՝ Ծրագիր) աջակցելու նպատակով:

Վերոնշյալ Ծրագրի նպատակներն են բարելավել տարրական դպրոց մուտք գործելու երեխաների դպրոցական պատրաստվածության մակարդակը, բարելավել ավագ դպրոցների ֆիզիկական վիճակը և կրթական ռեսուրսների առկայությունը, ինչպես նաև աջակցել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության որակի բարելավմանը և համապատասխանությանը:

Ծրագիրն իրականացվում է «Կրթական ծրագրերի կենտրոն» ՊՀ-ի կողմից, որը պատասխանատու է Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների ընդհանուր վարչարարության, շարունակական համակարգման, գործունեության իրականացման և այդ գործունեության վերահսկման համար: «Կրթական ծրագրերի կենտրոն» ՊՀ-ն պատասխանատու է նաև Ծրագրի միջոցների ֆինանսական կառավարման, փոխանցումների, հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության ապահովման համար, ինչպես նաև պատասխանատու է անվտանգության կանոններին համապատասխանության, բոլոր ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը և դրամաշնորհային ծրագրերի վերահսկումն ապահովելու համար: Մանսավորապես, ներկայումս Ծրագրի շրջանակներում իրականացվում է դրամաշնորհային երկու ծրագիր՝ դրամաշնորհներ նախադպրոցական միկրոծրագրեր իրականացնելու համար և դրամաշնորհներ բարձրագույն ուսումնական հաստատություններին նորարարական ծրագրերի իրականացնելու համար (ՆՄՀ):

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 37,500 հազար ԱՄՆ դոլար, որից ՀԲ-ի կողմից իրականացվող ֆինանսավորումը կազմում է 30,000 հազար ԱՄՆ դոլար՝ բաղկացած Զարգացման միջազգային ընկերակցության (ՋՄԸ) և Վերակառուցման և զարգացման բանկի (ՎՋԵԲ) կողմից երկու հավասարաչափ ֆինանսավորումից: ՀՀ կառավարության կողմից իրականացվող համաֆինասավորման չափը կազմում է 7,500 հազար ԱՄՆ դոլար:

Ծրագիրը բաղկացած է ստորև ներկայացված երեք բաղադրիչներից՝

- Բաղադրիչ 1 - Հանրակրթության որակի բարելավում
    - Ենթաբաղադրիչ 1.1 - Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում
    - Ենթաբաղադրիչ 1.2 – Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը
    - Ենթաբաղադրիչ 1.3 - Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում
    - Ենթաբաղադրիչ 1.4 – Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով

- Բաղադրիչ 2 – Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը

- Բաղադրիչ 3 – Ծրագրի կառավարում, մշտադիտարկում և գնահատում:

2018 թվականի մարտի 1-ին ՀՀ Ֆինանսների նախարարությունը ծրագիրը 24 ամսով երկարացնելու նպատակով պաշտոնական նամակով դիմել է Համաշխարհային Բանկին, արդյունքում, խնդրանքը բավարարվել է և ծրագրի ավարտը 2019 թվականի սեպտեմբերի 30-ից երկարացվել է մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը:

ՀՀ կառավարությունը հայտարարել է ծրագրեր իրականացնող գրասենյակների գործունեության դադարեցման և այդ գրասենյակների կողմից իրականացվող գործունեությունը լիազոր մարմնի կազմում իրականացնելու մասին: ԿԾԿ ԾԻԳ-ի լիազոր մարմնի՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, կողմից դեռևս այս հարցի առումով որևէ պաշտոնական գործընթաց չի մեկնարկվել:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն: Սույն հիմունքի համաձայն, գործառնությունները և այլ դեպքերը ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում (այլ ոչ, երբ ստացվում կամ վճարվում են դրամական միջոցները և դրանց համարժեքները), և դրանք արտացոլվում են այն ժամանակաշրջանի հաշվապահական հաշվառման գրանցումներում և ներկայացվում այն ժամանակաշրջանի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են: Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բաղկացած են՝

- Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունից,
- Ըստ գործունեության տեսակների՝ միջոցների օգտագործման մասին հաշվետվությունից,
- Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից,
- Հատուկ հաշիվների մասին հաշվետվությունից,
- Ծախսերի մասին հաշվետվությունից:

(բ) Հաշվետվության արժույթ

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների հաշվետվության արժույթը ԱՄՆ դոլարն է: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ԱՄՆ դոլարով՝ 1 ԱՄՆ դոլարի ճշտությամբ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

(ա) Արտարժույթով գործարքներ

Ծրագրի շրջանակներում, մասհանումները կատարվել են Ծրագրի հատուկ հաշիվներին ԱՄՆ դոլարով: Իրավասու և ընդունված ծախսերի (ապրանքներ, ծառայություններ և այլն) գծով վճարումները կատարվել են հատուկ հաշիվներից «Կրթական ծրագրերի կենտրոն» ՊՀ-ի կողմից:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվել են իրական արժեքով վերահաշվարկվել են հաշվետու արժույթով՝ կիրառելով իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխանակման փոխարժեքը: Արտարժույթով արտահայված ոչ դրամային ակտիվները, որոնք չափվել են սկզբնական արժեքով վերահաշվարկվել են հաշվետու արժույթով՝ կիրառելով գործառնության ամսաթվի դրությամբ գործող փոխանակման փոխարժեքը:

Ծրագրի չօգտագործված մնացորդները վերահաշվարկվել են կիրառելով ԱՄՆ դոլարի՝ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանած փոխանակման փոխարժեքը, որը կազմել է 479.7 ՀՀ դրամ: Ծրագրի ծախսերը ներկայացված են

ԱՄՆ դոլարով՝ կիրառելով գործառնության ամսաթվի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանած փոխանակման փոխարժեքը:

(բ) Հարկեր

Կիրառվող բոլոր հարկային պարտավորությունները հաշվարկվել և վճարվել են ՀՀ հարկային կանոնակարգերին համապատասխան: